

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետությունում առողջապահական համակարգի բարեփոխումների տեխնիկական աջակցության» դրամաշնորհային ծրագրի «Առողջապահության համապարփակ ապահովագրության ներդրման տեխնիկական աջակցության» բաղադրիչ

I. Նախապատմություն

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Առողջապահության նախարարություն» բաժնի 1.4 և 1.6 կետերի և կառավարության 2023 թվականի փետրվարի 3-ի N 133-Լ որոշման N 1 հավելվածի 2.2 և 5.2 կետերի համաձայն, ԱՆ կողմից պետք է իրականացվեն «Առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման ավտոմատացված գործիքի» և «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման գործիքի» մշակման աշխատանքներ: Այդ նպատակով Ասիական Զարգացման Բանկի տեխնիկական օժանդակությամբ, ԱՆ ԱԱԻ-ում գործող առողջության համապարփակ ապահովագրության ներդրման փորձագիտական խմբի մասնակցությամբ, մշակվել և ԱՆ 13.10.2023թ-ի N 4958-Ա հրամանով հաստատվել են.

- «Առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման ավտոմատացված գործիքի»
- «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման գործիքի» տեխնիկական առաջադրանքները:

II. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հիմք ընդունելով ԱՆ 13.10.2023թ-ի N 4958-Ա հրամանով հաստատված «Առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման ավտոմատացված գործիքի» և «Բժշկական օգնության և սպասարկման

ճառայությունների գների հաշվարկման գործիքի» տեխնիկական առաջադրանքները, մշակել, փորձարկել և սպասարկել առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման և բժշկական օգնության և սպասարկման ճառայությունների գների հաշվարկման գործիքների էլեկտրոնային ավտոմատացված մոդուլները:

III. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ծրագրային ապահովման մշակողի ազգային մասնագետից կպահանջվի կատարել հետևյալ խնդիրները՝ սերտորեն համագործակցելով հիմնական շահագրգիռ կողմերի հետ.

1. Ապահովել գործիքի մշակումը՝ հիմնվելով գործիքների մշակման տեխնիկական առաջադրանքի փաստաթղթերի վրա.

1) Նախագծել և մշակել էլեկտրոնային երկու գործիք՝ ճառայությունների գների հաշվարկման և ճառայությունների փաթեթի ակտուարական հաշվարկների իրականացման համար, ներառյալ տվյալների մուտքագրումը, վավերացումը և հաշվետվությունների ֆորմաները

2) Մշակել տվյալների բազայի կառուցվածքը, հիմնական և լրացուցիչ աղյուսակները, դրանց կապերի սխեմաները:

3) Տեղադրել գործիքները մշակման և փորձարկման միջավայրում, տրամադրել համապատասխան ծրագրային միջոցներ թեստավորման:

4) կատարել գործիքների թեստավորում, բացահայտել վրիպակները և սխալները, կատարել համապատասխան ուղղումներ և թարմացումներ:

5) սերտորեն համագործակցել առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի և առողջության համապարփակ ապահովագրության ներդրման աշխատանքներում ներգրավված առողջապահական ճառայությունների գների և ճառայությունների փաթեթի գնահատման փորձագետների հետ՝ կապված կոնկրետ գործիքների մշակման պահանջների հետ

7) սպասարկման ժամանակահատվածում փոփոխված պահանջների հիման վրա կատարել ծրագրային հավելվածում պահանջվող փոփոխությունները.

IV. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(i) լիովին գործունակ և օգտագործելի գործիքներ և տվյալների բազա՝ ֆունկցիոնալ, նախագծային և տեխնիկական բնութագրերին համապատասխան.

(ii) Համակարգը տեղադրված է և գործում է փորձնական տեղամասերում և կենտրոնական սերվերում.

(iii) Համակարգի սկզբնական կողերը, տվյալների բազայի սխեման և տեխնիկական հղման փաստաթղթերը կազմված են և ներկայացված.

Բոլոր հաշվետվությունները և արձանագրությունները պետք է ներկայացվեն հետևյալ կերպ. 1 օրինակ փորձագիտական խմբի ղեկավարին և 1 օրինակ ԱՆ ԱԱԻ-ին: Բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով և հայերեն լեզվով: Կատարված աշխատանքները ըստ փուլային համարվում են ընդունված փորձագիտական խմբի ղեկավարին կողմից ընդունելուց և ՀՀ ԱԱԻ-ի կողմից հաստատելուց հետո:

V. ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Փորձագետը պետք է ուղղակիորեն աշխատի Փորձագիտական խմբի համակարգողի հետ:

- Փորձագետը պետք է ուղղակիորեն հաշվետու լինի ՀՀ ԱՆ ԱԱԻ-ին:

- Պատրաստված հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկատվություն ձեռք բերված առաջընթացի, բացահայտված արդյունքների և գործընթացների բարելավման վերաբերյալ առաջարկություններ՝ նյութերի աղբյուրների հստակեցմամբ: Փորձագետի աշխատանքի արդյունքների մասին հաշվետվությունները համաձայնեցվում են Փորձագիտական խմբի համակարգողի հետ:

- Համակարգի ծրագրային ապահովման և տվյալների բազայի նախագծման մոտեցումները պետք է փոխադարձորեն համաձայնեցվեն:

VI. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Որակավորում

1. Համակարգչային գիտության կամ ճարտարագիտության բակալավրի կոչում
2. Օբյեկտ-կողմնորոշված (object-oriented) ծրագրավորման լավ իմացություն
3. Առաջարկվող ծրագրի հիմքում ընկած նախագծման հիմնարար սկզբունքների իմացություն
4. Տվյալների բազայի սխեմաների ստեղծում, որոնք ներկայացնում և աջակցում են բիզնես գործընթացներին
5. Ծանոթություն գործիքների դիզայնի և ճարտարապետության առաջադեմ մոտեցումներին և տեխնոլոգիաներին

Հատուկ փորձ

1. Ժամանակակից տեխնոլոգիաների հիմքի վրա վեբ հավելվածների ծրագրավորման փորձ
2. Ավտոմատացված թեստավորման հարթակների և միավորի թեստերի ներդրում
3. Կողի կառավարման գործիքների հմուտ իմացություն, ինչպիսիք են Git, Azure DevOps, TFS
4. Ծրագրային ապահովման և տվյալների բազայի կառավարման համակարգերի մշակման ոլորտում պետական կազմակերպությունների կամ ծրագրերի հետ աշխատելու փորձ

Ազգային փորձագիտական փորձը տարածաշրջանում / Լեզվի իմացություն

• Առնվազն 15 տարվա փորձ ծրագրային ապահովման մշակման, տվյալների բազայի նախագծման և ծրագրային ապահովման պահպանման, նաև տեխնիկական միջոցների ընտրության և կարգաբերման ոլորտում, այդ թվում նաև նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատելու փորձ.

- Տեխնիկական անգլերենի տիրապետում
- Հայերեն լեզվով հաշվետվությունների կազմման հմտություններ: